

---

## **ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

### **ԳԵՂԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Ժամանակակից աշխարհում օդանավակայանների տնտեսական գործունեության վերլուծությունների հիմնախնդիրը ձեռք է բերել տեսական և գործնական մեծ նշանակություն, մանավանդ Հայաստանում, որտեղ երեննի 13 օդանավակայաններից ներկայումս գործում են ընդհամենք երկուսը: Հարցի հրատապությունը ևս մեկ անգամ ընդգծվեց, երբ փակվեց հայկական ուղևորատար միակ ավիաընկերությունը: Դա վկայություն էր այն բանի, որ անկախացումից հետո Հայաստանում գործերը վատ են ոչ միայն օդանավակայանների գործունեության ոլորտում, այլև օդանավերի շահագործման: Սակայն, որքան էլ տարորինակ է, այս փաստը դեռևս չի արժանացել գիտական ուսումնասիրության, ինչպես դա արվել է տնտեսության այլ ճյուղերի դեպքերում: Հասարակական կարծիքի բուրն արձագանք եղավ միայն ԶԼՍ-ների մակարդակով:

Հայաստանի տնտեսական գիտության շրջանակներում օդանավակայանների գործունեության հիմնահարցը՝ որպես ինքնուրույն հետազոտության ոլորտ, համարյա չի ուսումնասիրվել: Ուշագրավ են միայն Դ. Ա. Աթբաշյանի վերլուծությունները, որոնք, ցավոք, տպագրվել են ոչ գիտական հանդեսմերում: Այմինչ արտերկրում այս ոլորտը տնտեսագիտական լուրջ քննությունների նյութ է դարձել<sup>1</sup>: Շուկայական պայմաններում օդային փոխադրատորմի կառավարմանը նվիրված գրքեր ունեն Վ. Մ. Կուլիլոն<sup>2</sup>, Ֆ. Ի. Չուպրինան<sup>3</sup> և այլք:

Օդանավակայանների տնտեսական գործունեության հանդեպ հետաքրքրությունը պայմանավորված է այն հանգանաքով, որ վերջինիս հետազոտությունը նպաստում է գիտական տեսությունների և առօրյա գիտելիքների միջև խզումը հաղթահարելուն՝ ռազմավարական համարվող կառույցների միջոցով պետության և հասարակության շահերը ներկայաց-

<sup>1</sup> Տե՛ս Կիրկով Վ. Կ. Организация управления предприятиями гражданской авиации. М., 1980, Կօբա Վ. Գ., Մակարօվ Ե. Վ., Դիբրօվա Գ. Ս. Эффективность использования основных фондов гражданской авиации. М., 1984, «Аэропорты и воздушные трассы»: Учебник для вузов гражданской авиации. М., 1984, «Экономика гражданской авиации»: Учебное пособие. Киев, 1989, Աշֆօրդ Հ., Ստենտօն Խ. Մ., Մոր Կ. Ա. Функционирование аэропорта. М., 1991, «Экономика гражданской авиации СССР»: Учебник для вузов. М., 1983:

<sup>2</sup> Տե՛ս Կուրիլո Վ. Մ., Ջիլինսկի Վ. Վ., Ջդանօվ Վ. Պ. Гражданська авіація: смена моделі управління. М., 1991:

<sup>3</sup> Տե՛ս Կուլաև Յ. Փ. Փրոբлемы управления воздушным транспортом в рыночных условиях. Киев, 1992:

նելով որպես մեկ ամբողջություն:

Միջազգային փոխադրական ծառայությունների շուկայում օդանավակայանային համալիրների մրցունակության բարձրացման ուղղությանը համաշխարհային փորձի ուսումնասիրունը ցույց է տալիս, որ ընդհանուր փոխադրական համակարգի զարգացումը և օդային փոխադրատորմինը մասնավորապես դառնում են ոչ միայն նորամուժական ննուշի տնտեսական աճի իրականացման անհրաժեշտ պայման, այլ նաև կյանքի որակի բարելավման և ազգային տնտեսության մրցունակության բարձրացման գործոն:

Փոխադրատորմը՝ որպես միջնյուղային համալիր, համաշխարհային տնտեսության մեջ առաջատար տեղ է գրավում: Տնտեսության համաշխարհայնացման նորարարական գործընթացները, միջազգային առևտորի աճը և զբոսաշրջությունը անհնար են առանց համաշխարհային փոխադրատորմային համակարգի զարգացման, փոխադրուների արտադրկարգի և դեկավարման համակարգի կատարելագործման:

Համաձայն Միջազգային օդային փոխադրատորմի միավորման (ՄՕՓՄ) վիճակագրական տվյալների՝ 2012 թվականին ուղևորային օդային փոխադրուներին պահանջարկն աճել է 5.3 տոկոսով, իսկ բեռնատար փոխադրուներինը նվազել է 1.5 տոկոսով: Բեռնատար փոխադրուների առևտորային բեռնվածքը տարվա ընթացքում 45.2 % է: Ուղևորային փոխադրուների պահանջարկի աճի արագությունը ավելի ցածր է 2011 թ. ցուցանիշից (5.9 %), բայց ավելի բարձր է վերջին 20 տարիների միջին ցուցանիշից (5 %): Բեռնվածքության տոկոսը հասել է իր համարյա ամենաբարձր մակարդակին՝ 79.1 %: Ըստ որում, հետաքրքրությունը միջազգային թռիչքների նկատմամբ աճել է ավելի շատ (6 % աճ), քան ներքին թռիչքների (+4 %): Աճի հիմնական գործոնները եղել են զարգացող շուկաները: ՄՕՓՄ-ն 2013 թ. համար կանխատեսում է ուղևորային փոխադրուների 4.5 % աճ, իսկ բեռնատարների՝ 1.4 % աճ: Արդյունքում Եկամուտները 2012 թվականի 6.7 մլրդ դոլարից (շահութաբերության գործակիցը՝ 1 %) 2013 թվականին կհասնի մինչև 8.4 մլրդ դոլարի (շահութաբերության գործակիցը՝ 1.3 %)<sup>4</sup>:

Օդանավակայանները՝ որպես փոխադրական համակարգի կարևոր մաս, անհրաժեշտ բաղադրիչներ են տեղական, ազգային և տարածաշրջանային ենթակառուցվածքում: Դրա հետ մեկտեղ՝ օդանավակայանը ոչ միայն հասարակական ծառայություններ մատուցող է, այլև սեփական գործարար խնդիրներով և զարգացման ռազմավարությամբ ինքնուրույն առևտորային համակարգ է՝ ուղղված գործունեության տնտեսական արդյունավետության աճին:

Շատ օդանավակայանների վերգետնյա փոխադրական ենթակառուցվածքների վիճակը անբավար է և մաշված: Հատկապես անմիտքար վի-

<sup>4</sup> Տես ԻАТА: Спрос на пассажирские перевозки в 2012 году вырос на 5.3%.- AEX.RU, <http://www.aex.ru/news/2013/2/21/103167/>, Главная → НОВОСТИ → 21 февраля 2013 г., 20.06.2013, էջ 3:

ճակում են թռիչք-վայրէջքային գոտու արհեստական ծածկը, գետնավարման ուղիները, օդանավերի կայանատեղերը և լուսաձայնային սարքավորումները: Օդանավակայայաններում անվտանգության համակարգի պահպանան վիճակը նույնպես անբավարար է: Օդանավակայայանների արտադրական ենթակառուցվածքի թերզարգացածությունը խոչընդոտում է տարանցիկ ներուժի զարգացումը և գոյություն ունեցող կառույցների նորացման համար պահանջում է ֆինանսական մեծ ծախսեր: Ներկայումս անհրաժեշտ է մշակել միջոցներ՝ ուղղված օդանավակայայանների մրցակցային առավելությունների ձևավորման՝ նրանց զարգացման մեջ ներգրավելով մասնավոր ներդրողների, որը կնպաստի օդափոխադրական ճյուղի արդյունավետ զարգացմանը:

Օդանավակայայանների գործունեության համալիր վերլուծության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ գործոնների վրա՝ ուղևորահոսք, ենթակառուցվածքի հզորություն, դրամագլխային ներդրումներ, փողային հոսք, գործունեության դրամամիջոցային արդյունք, զբաղվածություն, սեփականության կառուցվածք, օդափոխադրողների հետ հարաբերություն, օդագնացային ճյուղի համագործակցություն պետության կողմից կարգավորման ենթակա գործունեության ոլորտներում:

Օդանավակայայանների եկամտաբերությունը օդընկերությունների համեմատ ավելի քիչ է ենթարկվում արտաքին շուկայի ազդեցություններին, որը հնարավորություն է տալիս ճյուղ ներգրավելու ռազմավարական ներդրողների: Օդանավակայայանները ծերնարկության արժեքը ավելացնում են ուղեկցող ծառայությունների շնորհիվ (սպասարկում օդանավակայանի տարածքում, վառելիքի լիցքավորում, փոխադրական ծառայություններ)՝ ապահովելով արդյունավետ փոխգործակցություն օդային փոխադրումների շուկայի այլ մասնակիցների հետ: Օդանավակայայանների ներդրումային գրավչությունը մեծանում է եկամտի մեծացման դեպքում, առաջին հերթին ոչ օդագնացային գործունեության ոլորտի հաշվին:

Առաջատար օդանավակայանների մրցունակության գնահատումը ցույց է տալիս, որ լավագույն ցուցանիշները բաժին են ընկնում մայրաքաղաքային հանգույցներին: Մայրաքաղաքային օդանավակայայանների համեմատ՝ շրջանների օդանավակայայանները ունեն բոլյ դիրքեր, առաջատարից հետ են մնում 50 %-ով: Օդանավակայայանների մրցունակության որոշման կարևոր գործոնը ենթակառուցվածքի զարգացման մակարդակն է:

Օդանավակայայանի մրցունակությունը համալիր հասկացություն է և կախված է ազգային տնտեսության մրցակցային հնարավորությունից և համաշխարհային տնտեսության մեջ ներգրավվածությունից: Օդանավակայայանի մրցունակության ամի համալիր ռազմավարությունը ներառում է օդանավակայայանի առաքելությունը, ռազմավարական նպատակները, հանգուցային գործունեության հաջողությունը և որոշ չափով՝ ցուցանիշները: Օդանավակայայանների մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է դրանց տեխնիկական հագեցվածության մակարդակը հասցնել

Եվրոպական չափորինակների, կատարելագործել կառավարման եղանակը, բազմազանեցնել հիմնական գործունեությունը:

Հայաստանում տնտեսական ոլորտի զարգացման առաջնային խնդիր է համարվում երկարաժամկետ տնտեսական աճի ենթակառուցվածքային սահմանափակումների վերացումը: Որպեսզի ապահովվի տնտեսական աճի արագությունը՝ երկոր փոխադրական, հատկապես օդանավակայանային համակարգը պետք է անցում կատարի փոխադրական համակարգի զարգացման որակական նոր մակարդակ: Հայաստանի օդանավակայանների մրցունակության բարձրացման գործնական հանձնարարականները կարող են ծևակերպվել հետևյալ կերպ. ա) Հայաստանի տեղական օդանավակայանների տեխնիկական հագեցվածության մակարդակը հասցնել Եվրոպական չափորինակներին (ստանդարտ), բ) պետական-մասնավոր համագործակցության լծակների օգտագործում մասնավոր ներդրողների ներգրավման համար, գ) կառավարման եղանակների կատարելագործում, դ) հիմնական գործունեության բազմազանեցում, ե) մարդկային աշխատուժի ծևակորման հայեցակարգին համապատասխան կադրային քաղաքականություն:

Հսկայական անելիքներ կան տեղական օդանավակայանների զարգացման ուղղությամբ: Հայաստանի երեխնի զարգացած օդանավակայանային համակարգում օդանավակայաններ կային համարյա բոլոր վարչական շրջաններում: Իսկ ներկայումս ամբողջ երկրում գործում են ընդամենը երկու օդանավակայաններ ամենախոշոր քաղաքներում. «Զվարթնոց» և «Շիրակը»: Նախկին օդանավակայանները գործարկելու և երկրում ներքին օդագնացությունը զարգացնելու նպատակով օդագնացային իշխանությունները մշակել և ընդունել են փոքր օդագնացության զարգացման հայեցակարգ, սակայն գործ դրանից այն կողմ չի գնացել: Հայաստանում նախկինում զարգացած փոքր օդագնացությունը ապաշնորի կառավարման պատճառով ներկայումս գոյություն չունի ընդիանրապես:

2012 թ. Ֆրանսիայի Նիս քաղաքի օդանավակայանի նախկին տնօրեն Մուլադ Սարկիսյանը պատրաստակամություն է հայտնել ի սպաս դնելու սեփական փորձը Հայաստանում փոքր օդագնացության զարգացման գործում: Ուսումնասիրել է Հայաստանի մի քանի օդանավակայանների հնարավորությունները և կազմել Հայաստանում փոքր օդագնացության ստեղծման և զարգացման աշխատանքային ծրագիր: 2012 թ. հունիսի 22-ին գրանցվել է «Սավառնակ» հասարակական կազմակերպությունը, որի կանոնադրական նպատակն է փոքր օդագնացության զարգացման խթանումը<sup>5</sup>:

Ուսումնասիրվել է Ստեփանավանի օդանավակայանը Հայաստանի արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար շահագործելու հնարավորությունը:

2012 թվականի հունիսի 8-ին գրանցվել է «Սքայ Նետ Էրլայն» (Sky

<sup>5</sup> Տես «Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ԿՍ ՔԱԳՎ 2012 թ. գործունեության», [34](http://www.aviation.am/index.php/hy/legislation/hashv, 21.06.2013, էջ 3:</a></p></div><div data-bbox=)

Net Airlines LLC) նոր ավիաընկերություն, այն գրանցել է «Զեբստրիմ-32» տեսակի փոքր օդանավ, որով նախատեսվում է իրականացնել ներքին չվերթեր՝ այդ թվում նաև Հայաստանի և Արցախի միջև: Արտաքին ուղղություններից նախատեսվում են չվերթեր Վրաստան և Իրան:

Հայաստանի քաղաքացիական օդագնացության գլխավոր վարչությունը 2012 թ. շահագործողի վկայական է տվել տասը ավիաընկերությունների<sup>6</sup>: Ցավոք, դրանցից Հայաստանում գործունեություն է իրականացնում միայն մեկը՝ «Էյր Արմենիա» ավիաընկերությունը: Իմիջիայլոց, նաև ցավալի է, որ տասից միայն երկուսի անուններում են առկա հայերեն բառեր:

Հայաստանում օդային փոխադրատորմի գործունեության արտադրական ցուցանիշների վիճակագրությունը ցույց է տալիս կայուն աճ (տե՛ս աղ. 1): Ուղևորափոխադրումների ծավալը 2012-ին 2011-ի համեմատ աճել է 5.3 %-ով, բեռնափոխադրումներինը՝ 22.4 %-ով: Թոհջքների ընդիանուր քանակը 2012-ին 2011-ի համեմատ աճել է 4.9%-ով: Ուղևորաշրջանառությունը վերջին երկու տարիներին կտրուկ նվազել է համապատասխանաբար՝ 25.6 և 23.7 %-ով, իսկ բեռնաշրջանառությունը վերջին տարում աճել է 23 %-ով: Ըստ ներկայացված ցուցանիշների՝ Հայաստանում օդային փոխադրումները աճ են արձանագրում:

Հայկական մասնաբաժնում ևս մինչև 2011 թ. դիտվել է աճ: Իսկ 2012 թ. «Արմավիա» օդընկերությունը տեղափոխել է 405 հազար 945 ուղևոր, ինչը 2011 թվականին փոխադրածի 74.2 % է: Օդընկերությունների գործունեության հաջողության գրավականներից են ծիշտ վարվող գնային քաղաքականությունը, սպասարկման բարձր որակը, չվերթերի կանոնավորությունը: Նշված հատկանիշները, ցավոք, բնորոշ չեն հայկական փոխադրողին՝ «Արմավիային», որի պատճառով այն սնանկացավ և փակվեց:

Այսուսակներ 2-ում և 3-ում ներկայացված են Հայաստանի օդանավակայանների վերջին տարիների տնտեսական գործունեության արդյունքները: Այսուսակ 2-ում ներկայացված են «Զվարթնոց» օդանավակայանի արտադրական ցուցանիշները, ըստ որոնց՝ թոհջք-վայրէջքների քանակը 2012-ին 2011-ի համեմատ աճել է 5.4 %-ով: Ուղևորափոխադրումների ծավալը 2012-ին 2011-ի համեմատ աճել է 5.7 %-ով: Բեռնափոխադրումների ծավալն աճել է 22.3 %-ով: Այսպիսով, «Զվարթնոց» օդանավակայանում օդային փոխադրումները նույնպես աճում են:

Այսուսակ 3-ում «Շիրակ» օդանավակայանի գործունեության արտադրական ցուցանիշներից երևում է, որ թոհջք-վայրէջքների քանակը 2012-ին 2011-ի համեմատ նվազել է 17.6 %-ով, ուղևորափոխադրումների ծավալը՝ 2.7 %-ով, իսկ բեռնափոխադրումների ծավալն աճել է 65.1 %-ով: Ըստ այդմ, «Շիրակ» օդանավակայանում աճել են միայն բեռնափոխադրումները<sup>7</sup>:

<sup>6</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողները. ՀՀ ԿԱ ՔԱԳՎ»: <http://www.aviation.am/index.php/hy/activities/airoper>, 22.06.2013, էջ 1:

<sup>7</sup> Տե՛ս «Տեղեկանք ՀՀ ԿԱ ՔԱԳՎ».- <http://www.aviation.am/index.php/hy/statistics> .- 23.06.2013, էջ 1:

**Աղյուսակ 1**

**Հայաստանում օրային փրկութառության գործումնության պատարական, տնտեսական ցուցանիշները**

	Ցուցանիշը	Չափման միավորը	2007	2008	2009	2010	2011	2012	Տարիմերը
1.	Ուղևորաշրջամատությունը	Ծննդական միավորը	993,6	1127,1	1151,3	1278,6	951,3	725,5	
2.	Բնորմաշրջամատությունը	Ծննդական միավոր	13,1	13,1	9,5	9,7	9,1	11,2	
3.	Ուղևորաքենոնաշրջամատությունը	Ծննդական միավոր	102,6	114,6	113,1	124,8	94,7	-	
4.	Փոխադրումները՝ ուղևոր հայկ. փրկութառական փրկութառությունը	հազ. մարդ.	1405,632	1506,979	1469,242	1664,431	1674,475	1763,383	
	ռողց հայսկական փրկութառությունը	հազ. մարդ.	570,650	646,319	701,978	756,628	523,831	400,2	
	հայկ. փրկութառամբների տնտեսակարգ կշիռը	%	40,6	42,9	47,8	45,5	31,3	22,7	
	բնոր. փրկութառական փրկութառությունը	տոմսա	10010,2	10839	8406,6	8816	10033	12280	
	ռողց հայսկական փրկութառությունը	տոմսա	4159	4433	3813	4211	3663	-	
	հայկ. փրկութառությունը տնտեսակարգ կշիռը	%	41,5	40,9	45,4	47,8	36,5	-	
	5. Թոփչքընդի քանակը	հաստ	8119	8791	8885	10056	10149	10645	
	6. Տարեկան թրիչքաժամկետը	Ժամ	16480	18064	18240	19777	13495	14600	
	7. Տառապաճմինի գբառվածքությունը	%	68,6	68,5	55,9	59,8	62,1	65,1	
	8. Արևադարձական բնունականությունը		61,5	57,2	60	-	69,8	74,6	
	9. Թթվածների պրոտարրականությունը, միջ.	տոմսական/ժամ	5365	4672	4736	-	4085	3966	
	10. Օդամակային վարելիքի ծավալը	տոմսա	44263	48724	48741	50426	40070	35329	
	11. Հաստությը օժ. և լրաց. գործունեությունից	մն. դրամ	15294,5	22399,1	26960,4	28629,7	32314,9	-	
	12. Հասույթը	մն. դրամ	44056,4	57381	53172,7	54965,6	49530,5	-	
	այդ թվում՝ ուղևորափոխադրումներից		40823,3	53106,5	49905,4	52631,4	47292	-	
	բնունակութասրումներից		3233,1	4274,5	3267,3	2334,2	2238,5	-	
	13. Ծախաերդը		37165,9	51928,4	53709,2	58961,4	52734,4	-	
	այդ թվում՝ ուղևորափոխադրումներից		33585	47795,8	50241,4	57664,6	51448,2	-	
	բնունակութասրումներից		3580,9	4132,6	3467,8	1296,8	1286,2	-	
	14. Ծահույթը		6890,5	5452,6	-536,5	-3995,8	-3203,9	-	
	այդ թվում՝ ուղևորափոխադրումներից		7238,3	5310,7	-336	-5033,2	-4156,2	-	
	բնունակութասրումներից		-347,8	141,9	-200,5	1037,4	952,3	-	
	15. Քննմական միջոցները, տարեկանությունը	մն. դրամ	48416,8	48942,5	64986,5	83421,5	135617,0	-	
	16. Օդային տարածքով տարածքների չվերթը	հաստ	29155	32282	29622	32315	36211	34228	
	17. Թոփչք-վայրէջքները, ընդհանուր	հաստ	16238	17582	17770	20112	20328	21290	

**Աղյուսակ 2**  
**«Զվարթնոց» օդանավակայանի գործունեության արտադրական  
գուցանիշները**

Ցուցանիշը	Չափման միավորը	Տարիները						
		2006	2007	2008	2009	2010	2011	2012
1. Թոփք-վայրէջքները	հաստ	6746	7953	8624	8699	19571	9858	10392
2. Տեղափոխված ուղևոր, որից	հազ. ուղևոր	1172,1	1387,002	1482,79	1447,397	1612,016	1600,897	1691,815
մեկնած ուղևորները	հազ. ուղևոր	594,7	698,614	754,1	729,835	816,866	807,953	845,7
ժամանակած ուղևորները	հազ. ուղևոր	577,4	688,388	728,69	717,562	795,150	792,944	846,115
3. Փոխադրված թեռ և փոստ, որից	տոմնա	5940	10004	10774	8404	4591	10014	12251
առաքված թեռներ և փոստ	տոմնա	2656	3515	4038	3155	1398	4741	6687
ներմուծված թեռներ և փոստ	տոմնա	2760	6489	6736	5249	3193	5273	5564

**Աղյուսակ 3**  
**«Շիրակ» օդանավակայանի գործունեության արտադրական  
գուցանիշները**

Ցուցանիշը	Չափման միավորը	Տարիները								
		2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012
1. Թոփք-վայրէջքները,	հաստ	485	472	355	166	144	172	-	306	252
2. Տեղափոխված ուղևոր, որից	հազ. ուղևոր	44,3	46,1	28	18,63	24,189	21,845	52,415	73,578	71,568
մեկնած ուղևորները	հազ. ուղևոր	24	18,8	13,6	11,339	13,554	11,551	27,267	38,116	38,955
ժամանակած ուղևորները	հազ. ուղևոր	20,3	27,3	14,4	7,291	10,635	10,294	25,148	35,462	32,613
3. Փոխադրված թեռ և փոստ, որից	տոմնա	169	146	11	6,2	65	2,73	13,8	19,5	32,2
առաքված թեռներ և փոստ	տոմնա	50	20	2	-	2	0,13	6	0,5	15,3
ներմուծված թեռներ և փոստ	տոմնա	119	126	9	6,2	63	2,6	7,8	19	16,9

Ամփոփելով բոլոր աղյուսակների տվյալները, կարելի է հաշվել տապարարիների (2003-2012 թթ.) ընթացքում ցուցանիշների շարժը՝ հավելածը կամ նվազումը: Զնայած Վերջին տարիներին հայկական փոխադրողների բաժինը Հայաստանում ընդհանուր փոխադրումներում նվազել է, սակայն նկատվում է ընդհանուր ցուցանիշների կայուն աճ: Այսպես, տասը տարում Հայաստանում ստացվում է ուղևորափոխադրումների միջին տարեկան 7.5 տոկոսի հավելած, որից հայկական փոխադրողներով՝ 3.6 %, բեռնափոխադրումների հավելած՝ 4.5 %, որից հայկական փոխադրողներով՝ ինը տարում՝ 7.25 %: Ուղևորաշրջանառության միջին տարեկան հավելածը 1.9 % է, բեռնաշրջանառությանը՝ 11.3 %, թոփքների քանակինը՝ 6 %, տարեկան թոփքաժամերինը ինը տարում՝ 7.2 %, տարբեր տեսակի ինքնաթիռների համար միջին թոփքների արտադրողականությանը յոթ տարում՝ -3.1 %, օդային տարածքով տարանցիկ չվերթերինը՝ 7.4 %:

«Զվարթնոց» օդանավակայանով տասը տարում տեղափոխված ուղևորների միջին տարեկան հավելածը 7.7 % է, բեռներինը և փոստինը՝ 13.3 %, թոփք-վայրէջքներինը՝ 13.4 %:

«Շիրակ» օդանավակայանով տասը տարում տեղափոխված ուղևորների միջին տարեկան հավելածը 13.5 % է, բեռներինը և փոստինը՝ 143.8 %, թոփք-վայրէջքներինը ինը տարում՝ 2.1 %:

Հայկական և միջազգային օդափոխադրական ցուցանիշների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2012 թ. օդային ուղևորային

փոխադրումներն աճել են նույն չափով՝ 5.3 %, սակայն Հայաստանի ուղևորային փոխադրումների վերջին 10 տարիների միջին ցուցանիշը (7.5 %) գերազանցում է միջազգային ուղևորային փոխադրումների վերջին 20 տարիների միջին ցուցանիշին (5 %): Բեռնային փոխադրումների աճը գերազանցում է միջազգային ցուցանիշին 20.9 %-ով (22.4 % 1,5 %-ի դիմաց): Առևտրային բեռնվածության հարաբերակցությունը հետևյալն է. միջազգայինը՝ 79.1 %, հայկականը՝ 74.6 %:

Այսպիսով, Հայաստանի օդային փոխադրումների հիմնական ցուցանիշների աճի արագությունները գերազանցում կամ հավասար են միջազգային օդային փոխադրումների ցուցանիշներին: Վերոհիշյալը հանգեցնում է այն հետևողաբար աճը, որ Հայաստանի օդային փոխադրումների շուկան զարգացող է և մեծ ներուժ ունի:

Հայաստանի օդային փոխադրումների վիճակագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ մեր քաղաքացիական օդագնացությունում ձևավորվել է հակասական իրավիճակ: Մի կողմից դիտվում է ուղևորափոխադրումների տարեկան 7.5 % կայուն աճի միտում, մյուս կողմից՝ օդափոխադրումների աճի պայմաններում ավելի սուր են զգացվում տվյալ ճյուղի ենթակառուցվածքի անկատարությունը, դրա արտադրակարգային անթույլատրելի դանդաղ վերազինումը և օդային փոխադրումների շուկայի կառուցվածքային թերությունները: Օրինակ՝ ներկայումս Հայաստանում օդային ամբողջ փոխադրումներն իրականացնում են օտարերկրյա օդընկերությունները, որոնք ել ստանում են համապատասխան օգուտները և հարստացնում իրենց ազգային տնտեսությունները:

Հայաստանում օդագնացության խնդիրների լուծման համար դեռ կան խոչընդոտներ, ինչպիսիք են տվյալ ճյուղի օրենսդրության ոչ կատարյալ լինելը, գործունեության ոչ բափանցիկությունը: Զևավորված իրավիճակը բավարար չէ ճյուղը ճգնաժամային իրավիճակից դուրս բերելու համար: Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ կառավարող ընկերությունների ներգրավումը օդանավակայանային շահութագործի մեջ համարվում է արդյունավետ ուղղություն ենթակառուցվածքը բավարար վիճակում պահելու և, առաջընթաց ապահովելով, փոխադրումների աճը ավելացնելու և ուղևորների, ուղերերի, բեռների ու փոստի սպասարկման որակը բարձրացնելու համար:

Ուզմավարության զարգացման և օդային փոխադրատորմի մրցունակության բարձրացման համար հանձնարարվում է առանցքային օդակների հավասարակշռված փոխագործակցություն (օդընկերություն, օդանավակայան, օդային փոխադրումների կառավարման համակարգ): Օդանավակայաններն օդային փոխադրատորմի կարևոր ենթակառուցվածքային տարր են, դրանց տեղից և վիճակից են կախված օդային հաղորդակցության ցանցի տարածաշրջանային բնութագիրը, թոհքների լարվածությունը, ուղևորների և բեռների փոխադրման ծավալները: Օդային փոխադրումների ծավալի աճին համընթաց ավելի ակնառու են դառնում օդանավակայանի փոխադրումների սպասարկման ենթակառուցվածքի անկատարությունը ներդրումային պակասուրդի պայմաններում և մրցակցային շուկա-

յում գործելու պայմանների հավասարաչափ զարգացման ցանկության բացակայությունը:

Փորձը ցույց է տալիս, որ օդանավակայախի փողավորնան ցանկալի ծավալները միայն պետությունը չի կարող ապահովել գանձարանի սահմանափակության պատճառով:

Ժամանակակից պայմաններում ցանկացած ձեռնարկության կարևորագույն խնդիրն է եկամտի մակարդակի բարձրացումը: Օդանավակայախների եկամտի հիմնական աղբյուրը օդընկերությունների վճարումներն են: Մի կողմից օդանավակայախները շահագրգռված են նոր օդընկերությունների չվերթերի ներգրավմամբ, մյուս կողմից՝ օդընկերությունները շահագրգռված են սեփական եկամտի ավելացմամբ, նրանք ձգտում են մեծացնել նավատորմի օգտագործման արդյունավետությունը՝ ապահովելով առևտորային չվերթի բեռնան ընդունելի մակարդակ: Նշված խնդիրները լուծելու համար օդանավակայախները պետք է անցնեն հանգուցային համակարգով աշխատառմին:

Հանգուցային օդանավակայան ասելով նկատի ունենք փոխադրական ձգողության մեջ շրջանի կենտրոն համարվող խոշոր օդանավակայախն՝ նախատեսված մեծածավալ տարանցիկ ուղևորների սպասարկման համար: Հանգույցի հիմնական առավելությունը կարելի է համարել ուղևորների վերգետնյա ժամանակի տնտեսումը, նստատեղերի զբաղվածության գործակցի բարձրացումը, ինչպես նաև փոքր, տնտեսող ինքնաթիւնների օգտագործման հնարավորություն տեղական ուղղություններում: Օդանավակայախնի անցումը հանգույցի նրա առջև դնում է մի շարք խնդիրներ, որոնցից հիմնականը համարվում է բարձր թողունակության ապահովումը տարանցիկ ուղևորների ժամանելու և մեկնելու կարճ ժամանակահատվածում:

Թողունակության ապահովումը օդանավակայախների գործունեության համար կարևորագույն ցուցանիշ է, իսկ թողունակության ապահովման հարցում գլխավոր գործոնը մեկնող ուղևորների գրանցման և ուղերերի ձևակերպման գործառույթն է: Մեկնող ուղևորների գրանցումը և ուղերերի ձևակերպումը օդանավակայախնում ծառայությունների մեկ ամբողջ համակարգ է, որը ներառում է տոմսերի գրանցում, ուղևորների քանակի հաշվառում, ուղերերի կշռում և ընդունում, մշակում և տեսակավորում, ձեռնախրերի կշռում, փաստաթղթերի ձևակերպում և այլն:

«Վանդերլանդ ինդաստրիս Բ.Վ.» (Vanderlande Industries B. V.) ընկերությունը ուղերերի մշակման և պահպանման նորագույն սարքավորումների ստեղծման և ներդրման ոլորտում համարվում է համաշխարհային առաջատարը: Ավելի քան վարսունամյա իր գործունեության ընթացքում ընկերությունը աշխարհի տարածաշրջանային և միջազգային 350-ից ավելի օդանավակայախններում, այդ թվում նաև «Զվարթնոցում» տեղադրել է ուղերերի տեսակավորման մոտավորապես 500 համակարգ:

«Զվարթնոց» օդանավակայախնում տեղադրված է ուղերերի տեսակավորման ժամանակակից համակարգ, սակայն ոչ թե ինքնաշխատ, ինչպես

մյուս մայրաքաղաքների մեջ օդանավակայաններում, այլ ձեռքի տեսակավորմանը մեքենայացված:

Օդանավակայանի գրանցման ընդհանուր սրահում կան գրանցման համակարգչային համակարգի 48 սեղաններ, իսկ երկուսը՝ բարձրակարգ սպասարկման սրահում (ԲՍՍ): Շահագործման հանձնելուց հետո, ըստ պաշտոնական տվյալների, օդանավակայանը հնարավորություն ունի սպասարկելու տարեկան 3.5 մլն ուղևոր: Ներկայումս «Զվարթնոցի» մեկնման սրահը միաժամանակ կարող է սպասարկել 6 չվերթ: Գրանցման ուղևորասրահի հնարավորությունները թույլ են տալիս միաժամանակ սպասարկել 16 միջին չվերթ:

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ վերջին տասը տարիներին «Զվարթնոցում» ուղևորահոսքը տարեկան աճել է միջինը 7.7 %-ով: Այս նման արագություն պահպանելու դեպքում տասը տարի հետո, ինչն այնքան էլ երկար ժամանակ չէ օդանավակայանների համար, ուղևորահոսքի ծավալը կիասնի ուղևորասրահի նախագծային թողունակության սահմանին, և անհրաժեշտություն կառաջանա ավելացնելու թողունակությունը արտալարված կամ ներլարված եղանակով: Արտալարված եղանակը ենթադրում է նոր մակերեսների կառուցում, իսկ ներլարվածը՝ եղած մակերեսների ավելի լարված օգտագործում ժամանակի միավորի ընթացքում:

Մեր կատարած հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ օդային փոխադրատորմի գարգացման, փոխադրումների արտադրակարգի կատարելագործման նպատակով «Զվարթնոց» օդանավակայանում ձեռքով տեսակավորման համակարգի փոխարեն կարելի է ներդնել ուղեթերի տեսակավորման նոր՝ ինքնաշխատ համակարգ և չվերթայինի փոխարեն կիրառել ուղևորների գրանցման նոր՝ ազատ եղանակ, որոնք կիեշտացնեն ուղևորների գրանցման և ուղեթերի տեսակավորման գործընթացները, ինչպես նաև որակական նոր աստիճանի կրարձրացնեն ուղևորների սպասարկման նակարդակը: Դրանցից գլխավորը ուղևորների գրանցման եղանակն է, որն ավելացնելու է գրանցման սրահի թողունակությունը (66.6 % աճ), իսկ ուղեթերի տեսակավորման ինքնաշխատ համակարգը ածանցյալ է գրանցման նոր եղանակից, քանի որ նոր եղանակի դեպքում կոչված է սպասարկելու քանակապես և ժամանակի միավորում աճող ուղեթերների հոսքը: Ուղևորների գրանցման գործող չվերթային եղանակին փոխարինող ազատ եղանակը ուղևորներին հնարավորություն կտա գրանցվել թոհջրից ոչ թե 2-3 ժամ առաջ, ինչպես չվերթայինի դեպքում, այլ 4-5 ժամ առաջ, և գրանցվել ցանկացած սեղանի մոտ: Ուղեթերը ձեռքով տեսակավորելու համակարգը կփոխարինվի ինքնաշխատ համակարգով՝ ապահովելով նվազագույն ձեռքի աշխատանք, այդպիսով տնտեսելով ընթացիկ շահագործողական ժախսերը: Տնտեսական արդյունավետության հաշվարկները հաստատում են, որ երկու միջոցառումներն ել դրական տնտեսական արդյունքներ են տալիս, այսինքն՝ տնտեսապես արդյունավետ են:

Այսպիսով, Հայաստանում օդային փոխադրատորմի գործունեության արտադրական ցուցանիշների վիճակագրության վերլուծությունը ցույց է

տուլիս, որ թեև վերջին տարիներին հայկական փոխադրողների բաժինը Հայաստանում ընդհանուր փոխադրումների մեջ նվազել է, այնուամենայնիվ նկատվում է ընդհանուր ցուցանիշների կայուն աճ:

**ГЕГАМ ХАЧАТРЯН – Деятельность аэропортов как фактор развития экономики Армении.** – Экономическая деятельность аэропортов, повышение конкурентоспособности их комплексов, развитие общей авиатранспортной системы является фактором улучшения качества жизни и роста национальной экономики. В статье рассмотрены вопросы конкурентоспособности армянских аэропортов, проанализированы их производственные показатели, а также производственные показатели воздушного транспорта в Армении. На основе расчётов экономической эффективности сделаны предложения по развитию воздушного транспорта и совершенствованию технологии перевозок.

**GEGHAM KHACHATRYAN – Airport Activity as a Factor of the Development of the Armenian Economy.** – The article draws attention to the problems of the economic activities of airports, improving the competitiveness of airport facilities, the development of the overall air transport system as a condition of economic growth, a factor in improving the quality of life and competitiveness of the national economy. There were observed the issues of competitiveness of airports in Armenia. It carries out the analysis of the statistical production performance of air transport activities in Armenia and the Armenian airports. On the basis of economic efficiency calculations are made for the development of air transport, improvement of transportation technologies.